



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՅ**

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ**

**Հետազոտության թեման՝ Գործնական աշխատանքների
կազմակերպումը մայրենիի դասերին**

Առարկան՝ մայրենի

Հետազոտող ուսուցիչ՝ Մաճկալյան Արփինե Թադևոսի

**Ուսումնական հաստատություն՝ Երևանի հ. 132 հիմնական
դպրոց**

Երևան 2022

Բովանդակություն

| | |
|---|----|
| Ներածություն | 3 |
| „Մայրենի,, առարկայից կազմակերպվող գործնական աշխատանքների բովանդակությունը | 4 |
| Եզրակացություն | 15 |
| Գրականություն | 15 |

Ներածություն

Հին հունական աֆորիզմ

Երեխաների զարգացումն ուղղորդելու կամ սեփական ունակությունները բացահայտելու կարողությունների ձևավորումը ուսուցչի հիմնական խնդիրն է: Այս խնդիրը ուսուցչին և աշակերտներին մղում է դառնալու հետազոտող:

Տարրական կրթության ծրագիրը նպատակաուղղվում է կրթության բովանդակության սահմանման մեջ զգալի նշանակություն ունեցող ինքնուրույն գործունեության կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

Մայրենի լեզվի դասավանդումը յուրահասուկ բնույթ ունի հատկապես տարրական դասարաններում: Հայերենի դասընթացը ոչ միայն բուն լեզվական, այլև ճանաչողական արժեք ունեցող գիտելիքների հաղորդման հիմնական միջոց է: Ընթերցանության նյութերը սովորողների լեզվաքերականական գիտելիքների ու լեզվագործածության կարողությունների լեզվական ու գրական ճաշակի զարգացման հետ միասին պետք է ապահովեն նաև բնության, մարդու և հասրակական կյանքի մասին տվյալ տարիքին ու կրթական մակարդակին համապատասխան գործնական ու մատչելի գիտելիքների ձեռքբերում:

Այսօր անհրաժեշտություն է առաջանում որոնելու կրթական գործընթացի, կազմակերպման համապատասխան միջոցներ և ձևեր, որոնց օգնությամբ կարելի կլինի իրագործել աշակերտների ինքնուրույն ստեղծագործական աշխատանքները: Ստեղծագործական աշխատանքի ձևերից են նաև գործնական աշխատանքները:

Գործնականը սովորողների կողմից կատարվող այն աշխատանքներն են, որոնք վերաբերում են նրանց ձեռք բերած գիտելիքների, կարողությունների, հմտությունների գործնական կիրառություններին: Գործնական աշխատանքների ընթացքում իրականացվում են գիտելիքների որոնումը, դրանց իմաստավորումը, ամրապնդումը, կարողությունների և հմտությունների

ձևավորումն ու զարգացումը, գիտելիքների համակարգումը, այսինքն գործնական աշխատանքներն իրենց մեջ ներառում են աշակերտների կողմից կատարվող հետազոտական աշխատանքներ, նախագծային գործունեություն:

Գործնական աշխատանքները նպաստում են յուրացված գիտելիքների կիրառմանը ոչ ստանդարտ իրավիճակներում:

Գործնական աշխատանքները նախատեսված են և՛ միավորային, և՛ ուսուցանող գնահատումների դեպքում:

„Մայրենի,, առարկայից կազմակերպվող գործնական աշխատանքների բովանդակությունը

<<Գիտելիքը սկսվում է զգայական ընկալումից, երևակայությամբ անցնում է հիշողությանը, իսկ այնուհետև ձևավորվում է ընդհանուրի ըմբռնումը, հասկանալի իրերի մասին առկա գիտելիքների ճշգրտման համար կազմվում են դատողություններ>>
Յան-Ամոս Կոմենսկի

Հարկավոր է ընկալման մասնակից դարձնել արտաքին զգայարանները՝ լսողությունը, տեսողությունը, շոշախելիքը և այլն՝ դրանց զարգացմանը մեծապես նպաստում են գործնական աշխատանքները:

Հանրակրթության դերը մեծ մասամբ պայմանավորված է նրա գործնական-կիրառական նշանակությամբ: Ժամանակակից պայմաններում կարևոր նպատակ է աշակերտներին սովորեցնել ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները կիրառել կյանքում:

Գործնականը սովորողների կողմից կատարվող այն աշխատանքներն են, որոնք վերաբերում են նրանց ձեռք բերած գիտելիքների, կարողությունների գործնական կիրառություններին:

Գործնական աշխատանքների հիմնական նպատակներն ու խնդիրներն են.

- ձևավորել և զարգացնել սոցիալական հմտություններ,
- մատուցել կիրառման համար անհրաժեշտ տեսական ու գործնական նյութ,
- նպաստել ինքնադրսևորմանը, կենսագործունեությանը:

Գործնական աշխատանքների ընթացքում պետք է իրականացվեն գիտելիքների որոնումը, դրանց իմաստավորումն ու ամրապնդումը, կարողությունների, հմտությունների ձևավորումն ու զարգացումը, գիտելիքի ընդհանրացումը և համակարգումը: Գործնական աշխատանքը մի կողմից ուսումնական առաջադրանք է, մյուս կողմից՝ կատարման ընթացքում հիշողության, մտածողության, ստեղծագործական երևակայության դրսևորման ձև, որն էլ արդյունքում աշակերտին տալիս է գիտելիքի խորացում:

Օրագրային պահանջներին համաձայն՝ նախատեսվում են տարբեր բնույթի և տիպի գործնական աշխատանքներ.

- պատմության գծապատկերի կազմում՝ նախադասությունների համար գունային բաժանումներով,
- բառերի, վանկերի, կազմության գծապատկեր,
- դասանյութի մասերին համապատասխան բովանդակային կառուցվածքի գծակարգ,
- տեքստի սխալների ուղղում, խառնված հերթականության շտկում,
- գործնական գրություններ՝ նամակ, հասցե, հայտարարություն,
- գովազդային վահանակ,
- տեքստի նկարագրում,
- հեքիաթների հորինում, ինքնաշեն գրքերի նկարագրում,
- զանազան աղբյուրներից որոնել, գտնել տեղեկություններ տրված հարցերին պատասխանելու համար:

Ուսումնառության հենց առաջին օրերից սկսած՝ կարևոր է, որ երեխան դառնա ակտիվ մասնակից:

Գործնական աշխատանքի ընթացքում լուծվում են:

- ճանաչողական գործընթացների զարգացումը (երևակայություն, ընկալում, հիշողություն), մտածական գործընթացի զարգացում (համեմատում, վերլուծություն)
- հետազոտական կարողությունների ձևավորում և զարգացում
- ինքնակրթության կարողությունների ձևավորում
- գրավոր, բանավոր խոսքի զարգացում
- համագործակցային և հաղորդակցական կարողությունների զարգացում:

Գործնական կարողությունների առաջին փուլը 1-ին դասարանն է: Այս շրջանում այն կրում է ուսուցանող բնույթ: Այս փուլում աշխատանքը հիմնականում ուղղված է երևակայության, ստեղծագործական մտածողության, հարցեր տալու կարողությունների զարգացմանը: Օրինակ՝ կարելի է հանձնարարել՝

- շարունակել անավարտ տեքստը
- որոշել, թե որքան գործողություններ կարելի է կատարել որևէ առարկայի հետ, օրինակ՝ կավճի մի կտորի, աղյուսի և այլն

• որևէ առարկայի համար անվանել որքան հնարավոր է շատ հատկանիշներ (գրքի և այլն)

Առաջին դասարանից անհրաժեշտ է վարժեցնել հետազոտական գործունեության ձևերին՝

- մտածել ինքնուրույն,
- հարցնել մեկ ուրիշից,
- կարդալ գրքերում,
- տեղեկություն ստանալ համացանցից,
- փորձեր անցկացնել:

2-րդ դասարանից սկսած կարելի է արդեն կատարել գործնական աշխատանքներ, որոնք կառուցված կլինեն գործնական վարժություններից: Նրանք պետք է հայտնվեն ոչ սովորական իրավիճակներում, որտեղ անհրաժեշտ է հնարամտություն, ստեղծագործական մոտեցում: Իսկ գործնական աշխատանքները կատարելուց առաջ, պետք է լավ յուրացվի ուսումնական նյութը, քանի որ այն գիտելիքի կիրառումն է:

Ցանկացած գործնական աշխատանք պետք է ունենա կոնկրետ նպատակ (ակտիվ բառապաշարի հարստացում, առած-ասացվածքներ, գրավոր, բանավոր խոսք շարադրելու կարողությունների զարգացում և այլն):

Երեխաները պետք է կարողանան կիրառել իրենց յուրացված գիտելիքները:

Ցուրաքանչյուրը պետք է իմանա կատարման ընթացքը, յուրացնի ինքնուրույն գործելու ձևերը:

Աշխատանքը պետք է համապատասխանի սովորողների կարողություններին:

Գործնական աշխատանքի ընթացքում ստացված արդյունքները պետք է կիրառվեն ուսումնական գործընթացում:

Գործնական աշխատանքի բոլոր տեսակներում պետք է ապահովվեն ինքնուրույն ճանաչողական գործունեություն ծավալելու կարողությունը:

Մայրենիից տրվող գործնական աշխատանքները կարելի է անվանել ստեղծագործական-հետազոտական աշխատանքներ: Հետազոտական գործունեության կազմակերպման ընթացքում նա սովորում է դիտարկել, խորհել, համեմատել, պատասխանել հարցերին, կատարել եզրահանգումներ և այլն: Հետազոտական գործունեությունն ունի իր առանձնահատկությունները,

- այն նպատակաուղղված է իրենց հետաքրքրող գիտելիքների յուրացմանը,
- օգնում է յուրացնել այն կարողությունները, որոնք անհրաժեշտ են ամբողջ կյանքում,
- զարգացնում է հաղորդակցական կարողությունները,
- ընթանում է ուսուցչի և սովորողի ստեղծագործական համագործակցությամբ:

Հետազոտական աշխատանքի նախապատրաստման քայլաշարը,

1. թեմայի, տիպի, տեսակի որոշում,
2. Երեխաների հետ միասին նպատակի, խնդիրների ընտրություն,
3. ուշադրության, ընկալման, հիշողության, տրամաբանության զարգացման նպատակով խաղային տեխնոլոգիաների կիրառում,
4. ուսումնական միջոցների ընտրություն
5. հետազոտական աշխատանք ուսումնական միջոցների օգտագործմամբ,
6. տարբեր ձևերով արդյունքների ամփոփում

Տարրական դասարաններում հետազոտական աշխատանքները կրում են կոլեկտիվ բնույթ, թեմատիկան որոշում է ուսուցիչը, բայց յուրաքանչյուր աշակերտ իր գործն է կատարում ընդհանուրի մեջ:

Հետազոտական աշխատանքները դասակարգում են՝

- ըստ աշակերտների քանակի՝ անհատական, գույգով, խմբային,
- ըստ անցկացման վայրի՝ դասարանական և արտադասարանական,
- ըստ ժամանակի՝ երկարատև, կարճատև,
- ըստ թեմայի՝ առարկայական և ազատ,
- ըստ խնդրի՝ ուսումնական նյութի յուրացման խորացում և հարցեր, որոնք ծրագրային նյութ չեն:

Հետազոտական կարողությունների ձևավորման և զարգացման նպատակով կիրառվում է նախագծերի մեթոդը կամ նախագծային աշխատանքը: Մրա էությունն այն է, որ երեխաները ուսուցչի հետ միասին, իրենց հետաքրքրություններից ելնելով, իրականացնում են նախագիծ՝ լուծելով որևէ հետազոտական խնդիր: Նախագծային և հետազոտական գործունեությունները տարբեր են, հետազոտությունը ճշմարտության որոնումն է, իսկ նախագիծը՝ որևէ կոնկրետ պարզորոշ խնդրի լուծումը: Այս գործունեությունը նպաստում է հետազոտական կուլտուրայի ձևավորմանը, նպատակահարմար է միավորել և անցկացնել նախագծային-հետազոտական գործունեություն: Այս գործունեությունը սեփական հետազոտության նախագծման գործունեությունն է, որը ենթադրում է նպատակների և խնդիրների առկայություն, համապատասխան մեթոդների ընտրության սկզբունքներ, ընթացքի պլանավորում, հետազոտության իրականացման գնահատում, արդյունքների ներկայացում:

Նախագծի մեթոդը ներկայացրել և մշակել է ամերիկացի մանկավարժ, փիլիսոփա Ջ.Դյուին: Այս մեթոդը հիմնված է սովորողների ինքնուրույն գործունեության վրա, երբ աշակերտը որոշակի ժանակարնթացքում կատարում է որևէ աշխատանք: Այս աշխատանքը նպաստում է գիտելիքի որակի բարձրացման, սովորեցնում է մտածել, լուծել խնդիրներ:

Նախագծի մեթոդը ենթադրում է.

- խնդիրների առկայություն, որոնք պահանջում են ինտեգրված գիտելիքներ և դրանց լուծման համար հետազոտական ուղիներ:

- Ակնկալվող արդյունքների գործնական, տեսական, ճանաչողական արժեք:
- Հետազոտական մեթոդների կիրառում, վերջնական արդյունքների ձևավորում, ստացված տվյալների վերլուծություն, շտկում, եզրահանգում:

Նախագծի իրագործման նպատակներն են՝

- ճանաչողական որակների դրսևորում
- լեզվամտածողության և լեզվի մշակույթի յուրացման որոշակի մակարդակի դրսևորում:
- Գեղագիտական ընկալման և ճաշակի դրսևորում:
- Միջանձնային հատկանիշների դրսևորում:

Նախագծի մեթոդը հնարավորություն է ընձեռնում լուծելու մի շարք խնդիրներ.

- Պարապմունքները սահմանափակ գիտելիքների և կարողությունների ձեռքբերման շուրջ չեն:
- Մեծանում է անհատական և կոլեկտիվ պատասխանատվությունը աշխատանքի նկատմամբ:
- Սովորողները աշխատանքը կատարում են մինչև վերջ և տեսնում արդյունքը:
- Իրականացվում է համագործակցություն աշակերտների միջև, աշակերտի և ուսուցչի միջև: Փոխվում է ուսուցչի դերը՝ դառնում է աջակցող:

Այս մեթոդի առավելություններն են.

- Զարգանում է սովորողի ինտելեկտը:
- Զարգանում են ստեղծագործական կարողությունները:
- Ենթադրում է ինքնուրույն գործունեություն և այլն:

Նախագծի մեթոդում կարևոր է <<եռամիասնության>> կանոնը: Այսինքն՝ ուսուցչի, աշակերտի և ծնողի համագործակցությունը: Ուսուցչը՝ ուղղորդում, շտկում, ոգեվում է: Աշակերտն ու ծնողը գործում են միասին՝ երեխան գաղափարի կրողն է, ծնողը՝ օգնում է գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը:

Ըստ գործունեության տեսակների տարբերվում են՝ **հետազոտական ստեղծագործական, խաղային, տեղեկատվական և գործնական** նախագծեր:

Հետազոտական - Հետազոտական նախագծերն ունեն ճշգրիտ մտածված կառուցվածք, որը համընկնում է իրական գիտական հետազոտության կառուցվածքին, թեմայի արդիականությանը, հետազոտության խնդիրները, առարկան, նպատակը, գիտական վարկածը, բխող խնդիրները, հետազոտության մեթոդները, արդյունքների քննարկումը, եզրահանգումը:

Մտեղծագործական - Մտեղծագործական նախագծերը չունեն սովորողների միասնական գործունեության մշակված կառուցվածք և հետագայում զարգացվում են՝ վերջնական արդյունքի ձևի և ժանրի պահանջներին համապատասխան:

Խաղային - Խաղային նախագծերը մեծ նախապատրաստման աշխատանք են պահանջում: Ընդունված որոշումներն իրականացվում են խաղային իրավիճակներում: Սովորողները ստանձնում են որոշակի դերեր:

Տեղեկատվական - Տեղեկատվական նախագծերն ուղղված են ինչ-որ օբյեկտի, երևույթի մասին տեղեկատվության հավաքման, մշակմանը, վերլուծությանը և փաստերի ամփոփմանը:

Գործնական - Գործնական նախագծերը պահանջում են ճիշտ մտածված կառուցվածք, որը ներկայացվում է սցենարի տեսքով, որտեղ յուրաքանչյուրն ունի իր գործառույթը, մասնակցությունը:

Ըստ առարկայական- բովանդակային հատկանիշի.

- փոքր- կոնկրետ առարկայի նյութի հիման վրա:
- **Միջառարկայական**- ընդգրկում է մի քանի առարկաների թեմատիկաներ:

Ըստ մասնակիցների քանակի

- անհատական
- գույգերով
- խմբային

Ըստ նախագծի շարունակության

- կարճ ժամանակ պահանջվող
- երկար ժամանակ պահանջվող

Նախագծերի թեման ընտրելիս պետք է հաշվի առնել հետևյալը. այն պետք է հետաքրքրի սովորողներին, լինի մատչելի, աշխատանքի բովանդակությունը պետք է օգտակար լինի թե՛ մասնակիցներին, թե՛ ունկնդիրներին, կրի ճանաչողական բնույթ, պետք է հաշվի առնել տեղեկատվության աղբյուրները:

Նախագծի կատարման ընթացքում զարգանում են սովորողների ընդհանուր ուսումնական կարողությունները՝ աշխատանք դասագրքերով, բառարանով, առարկայական կարողությունները՝ տեքստը համառոտելու, բանավոր հաղորդելու, կարճ գրառումներ կատարելու և այլն, հաղորդակցական կարողությունները:

Նախագծի շուրջ աշխատանքի ընթացքում երեխաները զրուցում են ծնողների, հարևանների, ուսուցչի հետ, ընթերցում են գրքեր, հոդվածներ, հաճախում թանգարաններ և այլն: Ստացված տեղեկատվության հիման վրա գրում են հաշվետվություններ, ելույթ ունենում ընկերների առջև, գրում զեկույցներ:

Աշակերտը նախագծային գործունեության շուրջ աշխատում է հետևյալ փուլերով, քայլաչափով.

1. Նախագծի թեմայի ընտրություն
2. Նպատակի առաջադրում. << Ինչո՞ւ եմ ես դա անում >>
3. Վարկածի առաջաշում. << Ինչպիսի՞ն կլինի արդյունքը >>
4. Մեթոդի ընտրություն. << Ինչ անել, որպեսզի ստանալ այդ արդյունքը >>

5. Տվյալների հավաքագրում
6. Արդյունքի ստացում
7. Արդյունքի վերլուծություն
8. Եզրահանգումների կատարում
9. Արդյունքի ներկայացում, գնահատում:

Այս մեթոդի շրջանակներում փոխվում է ուսուցչի դերը, պատրաստի գիտելիքի կրողից նա վերափոխում է ճանաչողական գործունեության կազմակերպչի: Նա օգնում է անհրաժեշտ տեղեկատվական աղբյուրների որոնման հարցում, ինքն է հանդիսանում արյուր, համակարգում է ողջ գործընթացը, խրախուսում է և այլն: Կարևոր է ծնողի դերը. տալիս է խորհուրդներ, հետևում պլանի կազմմանը, մասնակցում ներկայացման նախապատրաստմանը:

Նախագծի շուրջ աշխատանքի փուլերը.

Առաջին փուլ - նախապատրաստում

Երկրորդ փուլ - նախագծային և հետազոտական աշխատանքների կազմակերպում

Երրորդ փուլ - պատրաստի արդյունքի ներկայացում

Չորրորդ փուլ - արդյունքի գնահատում

Նախագծային գործունեության հնարավոր արդյունքներն են. բեմականացումները, համերգները, ամսագրերը, վիկտորինաները, գրքերը, տեսաֆիլմերը:

Ներկայացնեն հետազոտական- նախագծային աշխատանք իմ փորձից՝

- թեմա՝ <<Առած- ասացվածքներ>>
- նպատակը՝ ակտիվ բառապաշարի հարստացում առած-ասացվածքներով, խոսքում հիմնավոր գործածելու կարողությունների, ասացվածքների ուղիղ և փոխաբերական իմաստները հասկանալու կարողությունների զարգացում:
- ճանաչողական որակների դրսևորում
- գեղագիտական ընկալման, ճաշակի դրսևորում
- խմբերում աշխատելու կարողության ձևավորում, զարգացում

Աշխատելու փուլերը

1 – ին փուլ

- թեմայի որոշում
- նպատակի հստակեցում
- խնդիրների առաջադրում

2 –րդ փուլ

- աշխատանքային խմբի ընտրություն, խմբի ներսում դերերի բաշխում
- տեղեկատվական աղբյուրների որոշում

Դասարանը բաժանում են 5 խմբի.

1 –ին խումբ - հանձնարարված էր բացահայտել, թե ինչ են առած-ասացվածքները, ինչով են տարբերվում, հավաքագրել առած-ասացվածքներ:

2-րդ խումբ - հորինել պատմվածքներ, որոնք բացահայտում են առած-ասացվածքների իմաստը:

3-րդ խումբ- բեմադրել որևէ հորինված պատմվածք

4-րդ խումբ- գտնել աշխարհի այլ ժողովուրդների առած-ասացվածքներ

5-րդ խումբ- հորինել առաջադրանքներ առած-ասացվածքների վերաբերյալ վիկտորինայի համար:

Խմբերը հանձնարարությունները ստանալուց հետո սկսում են աշխատել (1 շաբաթ): Այնուհետև ստուգում են 1-ին խմբի աշխատանքները, որից էլ բխում է մյուս խմբի աշխատանքը՝ հորինել պատմություններ: Այսպես բոլոր խմբերի աշխատանքներին անդրադառնալով՝ ստուգում են, մշակում, խրախուսում, ուղղորդում և կազմակերպում են դաս, որի ընթացքում խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքները:

1-ին խմբի ավագը ներկայացնում է.

- • Մեր խմբին հանձնարարված էր բացահայտել, թե ինչ են առած-ասացվածքները:

• Ինչով են ասացվածքները տարբերվում առածներից:

• Հավաքագրել առած-ասացվածքներ:

Հայկական առած-ասացվածքները հորինվել և պահպանվել են հայ ժողովրդի գոյության ողջ ընթացքում:

Առածը ժողովրդական բանավոր ստեղծագործության տեսակներից է: Առածները ունեն ճանաչողական մեծ առժեք: Նրանք արտացոլում են ժողովրդի կյանքի պատմական, կենցաղային հարաբերությունները, բնավորության առանձնահատկությունները: Առածը այլաբանական դատողություն է, որի իմաստը արտահայտվում է անուղղակի կերպով:

Գյուղ կանգնի, գերան կկոտրի:

Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք:

Երկաթը տաք-տաք են ծեծում:

Ով ալարի, ոչ դալարի:

Ասացվածքը ևս ժողովրդական բանավոր ստեղծագործության տեսակներից է: Ասացվածքներում արտահայտվում են ժողովրդի պատկերացումները կենսական հարաբերությունների, մարդու կոչման և այլ հարցերի վերաբերյալ:

Խելքը լավ է, քան հարստությունը:

Աշխատողը անոթի չի մնա:



Ասացվածքները իրենց բնույթով շատ մոտ են առածներին, սակայն նրանցից տարբերվում են որոշ կողմերով: Առածի մեջ իմաստալից դատողություններն ու մտքերը մարմնավորվում են այլաբանական պատկերով, ունեն խրատական բնույթ: Այնինչ ասացվածքներում դրանք արտահայտվում են ուղղակի անմիջական ձևով: Առած-ասացվածքների միջոցով բացահայտվել են ժողովրդի վերաբերմունքը չարի ու բարու նկատմամբ, մարդկային հարաբերությունները

կարգավորող վարք ու բարքի կանոնները: Առած-ասացվածքները ազգային մտածողության յուրօրինակ դրսևորումներից են:

2-րդ խմբի ավագը ներկայացնում .

- Մեր խմբին հանձնարարված էր հավաքել կամ հորինել պատմություններ, որոնք բացահայտում են առած-ասացվածքի իմաստը:

Ներկայացնում են պատմություններ:



3-րդ խմբի ավագը ներկայացնում է.

- Մեր խմբին հանձնարարված էր ընտրել հորինված կամ հավաքագրած պատմություններից որևէ մեկը, բեմադրել: Մենք ընտրել ենք „Ուս ուսի որ տանք՝ սարեր շուտ կտանք,, վերնագրով պատմությունը և բեմադրում են:

4 - րդ խմբի ավագը ներկայացնում է.

- Մեր խմբին հանձնարարված էր գտնել աշխարհի այլ ժողովուրդների առած-ասացվածքները:

„Ինքդ քեզ նայի որը երեք անգամ,, այս ճապոնական ասացվածքը սովորեցնում է հետևել սեփական վարքագծին:

Անմեղ մարդիկ տուժում են արաբները ասում են՝ „Շովը վիճաբանել է քամու հետ, իսկ դրանից տուժել է նավը,,:

Ֆրանսիացիները խորհուրդ են տալիս չհուսահատվել և ասում են՝ „Ընդունելով պարտությունը՝ սկսիր սկզբից,,:


Երբ հնդիկները չեն պահպանում բարեկամությունը, ասում են՝ „Կոպիտ մի կտրիի բարեկամության թելը, քանի որ եթե ցանկանաս նորից կապել այն, ապա հանգույց կմնա,,: Իսկ ռուսները նման դեպքում ասում են՝ „Կոտրված զավաթը չի կպնում,, կամ „Խոսքն արծաթ է, իսկ լուռյթունը՝ ոսկի,,:

5-րդ խմբի ավագը ներկայացնում է.

- Մեր խմբին հանձնարարված էր հորինել առաջադրանքներ առած-ասացվածքների վերաբերյալ՝ վիկտորինայի համար:


Առաջադրանք 1. Հետևյալ հայկական ասացվածքները համապատասխանեցնել այլ ժողովուրդների ասացվածքներին:

| | |
|---|---|
| Շան բնի կողքին աղվես չի ապրի | Անագնիվ ճանապարհով եկածը նույն ճանապարհով էլ կգնա:(ճապոնական) |
| Քամու բերածը քամին էլ կտանի: | Բուն էլ է մտածում է, որ իր ձագերը գեղեցիկ են:(ասորական) |
| Ագռավն ասաց իր ճուտին՝ մեռնեմ քո սպիտակ տոտին | Իմ հացն ուտում, իմ էլ սփռոցն է պատռում:(ասորական) |
| Որ աղբյուրից ջուր ես խմում, էն աղբյուրը մի պղտոտիր: | Ուր բազե շատ կա, աղավնի քիչ կլինի:(արխազական) |



Առաջադրանք 2. Ասացվածքի մեջ դնել համապատասխան նկարը:

- Դեռ --- չառած, փալանն է կարում:(եշը)
- Քաղցր լեզուն --- բնից կհանի:(օձը)
- --- վկան իր պոչն է:(աղվես)
- --- իր ձագերին բամբակ է անվանում:(ոզնի)
- Մի ձեռքով երկու --- չես բռնի:(ձմերուկ)
- --- յոթ երգ գիտի, յոթն էլ մեղրի մասին:(արջ)



Առաջադրանք 3. Ամբողջացնել առած-ասացվածքները:

- Աջով տուր, որ ձախով առնես:**
Յոթ չափիք մեկ կտրիք:
Փոս փորողը ինքն է փոսը ընկնում:
Ծույլը ուտելիս առողջ է, աշխատելուց՝ հիվանդ:
Հագուստի նորն է լավը, ընկերոջ՝ հինը:
Մեծին լատի ոտքը, քարին չի կայնի:

Այսպիսով կարող ենք ասել, որ առած-ասացվածքների կիրառումը խոսքում շատ կարևոր է: Դրանք գեղեցկացնում են խոսքը, օգնում են խոսողին մտքերն արտահայտելու կարճ և դիպուկ: Ասացվածքներն արտահայտում են խոսողի լեզվի ճոխությունը: Դրանք անհրաժեշտ են մեզ հաղորդակցման համար: Խոսքում առաց-ասացվածքների ճիշտ գործածումն արտացոլում է մարդու դաստիարակության և բարեկրթության մակարդակը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մայրենիի ժամերին անցկացվող ուսումնահետազոտական գործունեությունը աշակերտներին սովորեցնում է մտածել, առանձնացնել գլխավորը երկրորդականից, կատարել ինքնուրույն մտահանգումներ: Գործնական աշխատանքների իրագործման ընթացքում իրականացան գիտելիքի որոնումը, դրանց իմաստավորումը և զարգացումը, գիտելիքների ընդհանրացումն և համակարգումը, բառապաշարի հարստացումը, սովորողների գրավոր և բանավոր խոսքի զարգացումը, համագործակցային, հաղորդակցման կարողությունների զարգացումը, համացանցից տեղեկություն ստանալու կարողությունը: Սովորեցին ընտրել, ներկայացնել անհրաժեշտ նյութը, կարողացան պլանավորել իրենց գործունեությունները, ստեղծագործաբար մոտենալ իրենց աշխատանքին, համագործակցել ծնողի, ուսուցչի հետ:

Իմ կարծիքով՝ գործնական աշխատանքները նպաստում են գիտելիքի յուրացումը խորացնելուն, խթանում են երեխայի արդեն վաղ հասակում գիտելիքներին ինքնուրույն, ստեղծագործաբար հաղորդակից դարձնելու հնարավորությունները: Իսկ այդ հնարավորությունները հետագայում կօգնեն նրան դառնալ կրթված մարդ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կ. Թորոսյան, Կ.Չիբուխյան „Գործնական աշխատանքներ մայրենիից,, Երևանից 2012
2. „Նախաշավիդ,, 2010 N4 „ Գործնական աշխատանքները 4-րդ դասարանում,,